Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
2026-2027 ՈՒՍՏԱՐԻ, ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

021502.01.6 «ԳՈՐԾԻՔԱՅԻՆ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Ուսուցումն իրականացվում է միայն բակալավրիատի կրթական ծրագրով՝ 4 ուսումնական տարի:

Շրջանավարտն ստանում է արվեստի բակալավրի որակավորում:

Դիմորդները մասնագիտական քննություն են հանձնում հետևյալ առարկաներից.

1 -ին քննություն՝ «Մասնագիտական գործիք և դիրիժորություն» (ՄԳԴ)՝ բանավոր

2 -րդ քննություն՝ «Սոլֆեջիո և երաժշտության տեսություն» (ՍԵՏ)՝ բանավոր

Մասնագիտական գործիք և դիրիժորություն

Դիմորդը պետք է տիրապետի նշված գործիքներից որևէ մեկին (ֆլեյտա, կլարնետ, հոբոյ, գալարափող, շեփոր, տրոմբոն, հարվածային գործիքներ, ալտ, տենոր, բարիտոն, տուբա, սաքսոֆոն, սինթեզատոր-դաշնամուր, մարիմբա, կիթառ, բաս կիթառ, շվի, բլուլ, դուդուկ, սանթուր, քանոն, սազ, թառ, քամանչա, բամբիռ, ուդ, դհոլ):

Դիմորդը պետք է կատարի՝

- Մինչև հինգ նշան ունեցող մաժոր, մինոր գամմաներ
- Մեկ էտյուդ
- Մեծ կտավի երաժշտական ստեղծագործության, կոնցերտի որևէ մաս կամ տարբեր բնույթի երկու պիես:
- Հարվածայինները՝ (դհոլ, թմբուկ) կարդալ ռիթմիկ պատկեր թերթից:
- Դիրիժորական սխեմաների և էլեմենտների ցուցադրում՝ 2/4, 3/4, 4/4, 6/4 չափերը (պիանո, ֆորտե, լեգատո, ստակատո, ֆերմատո):

Սոլֆեջիո և երաժշտության տեսություն

➢ Սոլֆեջիո (հանձնարարելի գրականություն՝ Կալմիկով-Ֆրիդկին, Հ. Քացախյան)

Պահանջվում է՝

- Լսել, որոշել ինտերվալներ, եռահնչյուններ և ակորդներ՝ իրենց շրջվածքներով:
- Ն ո տ ա տ ե տ ր ի ց հանպատրաստից երգել միաձայն մեղեդի:

➢ Երաժշտության տեսություն (հանձնարարելի գրականություն՝ Վ.Ա. Վախրոմեև, Ի.Վ. Սպասոբին, Ռ.Մ.Աթայան)

Ծրագրում ընդգրկվում են հետևյալ հարցերը՝

- հնչյուն-հնչյունաշար-համակարգ,

- մաժոր և մինոր գամմաների տեսակները և հաջորդականությունը,
- դինամիկայի և ալտերացիայի նշաններ,
- տեմպ, չափ-տեսակները,
- ինտերվալներ, եռահնչյուն (շրջվածքներով), սեպտակորդներ. տեսակները՝ դոմինանտ սեպտակորդ, շրջվածքները և լուծումները:

ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

«Մասնագիտական գործիք և դիրիժորություն» (ՄԳԴ) (բանավոր):

Առավելությունը տրվում է դիմորդի կողմից ներկայացրած ծրագրի գործիքային կատարմանը:

1 -7 միավոր

- Ծրագիրը չի համապատասխանում ընդունելության պահանջներին:
- Ծրագիրը համապատասխանում է պահանջներին, բայց կատարվում է բազմաթիվ թերություններով:
- Բացակայում են դիրիժորական տարրական գիտելիքները:

8 միավոր

- Ծրագիրը և կատարումը համապատասխանում է ընդունելության քննության նվազագույն պահանջներին:
- 2/4 և 3/4 չափերի դիրիժորական սխեմաների ցուցադրում:

9-10 միավոր

- Ծրագիրը միջին բարդության է, կատարվում է որոշ սխալներով:
- 2/4, 3/4, 4/4 չափերի դիրիժորական սխեմաների բավարար ցուցադրում:

11-12 միավոր

- Ծրագիրը միջին բարդության է, կատարվում է որոշակի թերություններով:
- 2/4, 3/4, 4/4 չափերի դիրիժորական սխեմաների և ձայնի ուժգնության (ֆորտե, պիանո) ցուցադրում:

l3-14 միավոր

- Ծրագիրը միջին բարդության է, կատարվում է տեմպային և դինամիկ թերություններով:
- 2/4, 3/4, 4/4 չափերի դիրիժորական սխեմաների, ձայնի ուժգնության (ֆորտե, պիանո) և շտրիխների (լեգատո, ստակատո) ցուցադրում:

15-17 միավոր

- Ծրագիրը համապատասխան բարդության է, կատարման մակարդակը՝ լավ:
- 2/4, 3/4, 4/4, 6/4 չափերի դիրիժորական սխեմաների, ձայնի ուժգնության (ֆորտե, պիանո) և շտրիխների » (լեգատո, ստակատո, ֆերմատո) ցուցադրում:

18-20 միավոր

- Ծրագիրը բարդ է, կատարումը՝ գերազանց:
- Ղեկավարում է երաժշտական ստեղծագործությունը դաշնամուրի նվագակցությամբ:

«Սոլֆեջիո և երաժշտության տեսություն» (ՍԵՏ) (բանավոր):

1-7 միավոր

- Սխալ է պատասխանում բոլոր հարցերին:

8 միավոր

- Տեսության հարցերին մեծ մասամբ պատասխանում է սխալներով:
- 8 ինտերվալ-ակորդից ճիշտ է որոշում 4-ը:
- Նոտատետրից երգում է սխալներով:

9-10 միավոր

- Տեսության հարցերին պատասխանում է սխալներով:
- 8 ինտերվալ-ակորդից ճիշտ է որոշում 5-ը:
- Նոտատետրից երգում է ոչ մաքուր հնչերանգով և որոշակի սխալներով:

11-12 միավոր

- Տեսության հարցերին պատասխանում է որոշակի սխալներով:
- 8 ինտերվալ-ակորդից ճիշտ է որոշում 5-ը:
- Նոտատետրից երգում է մաքուր հնչերանգով, բայց որոշակի սխալներով:

13-14 միավոր

- Տեսության հարցերին հիմնականում պատասխանում է ճիշտ, բայց որոշ թերացումներով:
- 8 ինտերվալ-ակորդից ճիշտ է որոշում 6-ը:
- Նոտատետրից երգում է ճիշտ, բայց ոչ մաքուր հնչերանգով:

15-16 միավոր

- Տեսության հարցերին պատասխանում է ճիշտ, թեթևակի թերացումներով:
- 8 ինտերվալ-ակորդից ճիշտ է որոշում 7-ը:
- Նոտատետրից երգում է մաքուր հնչերանգով, բայց թեթևակի թերացումներով:

17-18 միավոր

- Տեսության հարցերին պատասխանում է անսխալ:
- 8 ինտերվալ-ակորդից ճիշտ է որոշում 7-ը:
- Նոտատետրից երգում է մաքուր հնչերանգով, ռիթմիկայի որոշակի սխալներով:

19-20 միավոր

- Տեսության հարցերին պատասխանում է անթերի:
- 8 ինտերվալ-ակորդից ճիշտ է որոշում 8-ը:
- Նոտատետրից երգում է վարժ, անսխալ: